Նշմարել և Ն. Թիւ ընդգրուած չէ, զոր կողմէ վրայ նշանակեցինք:

Նա և ներկայ միացեալ ամսագրոյս մէջ մի թերթ յաւելացուցինք, որ փոխանակ 6 թերթի, 7 թերթ եղաւ ամէն է: Անցեալ Ամսոյ. ամսագրոյ մէջ ևս մի թերթ յաւելացուցած էինք: Աւստի կյուսամք, թէ այսպէս երբեմն մէն մի և առաւել թերթ յաւելայնելով՝ առաւել և ընտիր նիւթեր պարունակելոյ աղագաւ, մեր սիրելի Ազգայնոց գոհութեան և ուրախութեան արժանի օգտաւէտ ծառայութիւն արած կը գտնուինք, որով ամենևին ոչ աւելորդ կը համարինք յաւելցել, եթէ՝ մեր նպատակը ոչ այնքան նիւթական օգուտ քաղել, որքան՝ որ առաւել բաղձալին է՝ մեր սիրելի ազգայնոց մտաւորական և բարոյական զարգացման և լուսաւորութեան և այլն՝ ջանալ և մեր անձկութեանց պտղոց արգասիքը տեսնել և վայելել է:

Ամսագրոյս խմբագրութիւնը կը փութայ կրկին խնդրել այն Կոնսիստորիայներէն և Հ. կառավարութիւններէն, որք տակաւին և ոչ մի ցուցակ չեն յղած, զի բարեհաճին փութացուցանել բաժանորդաց ցուցակները՝ ուր որ անկ է, որպէս զի արդէն մեր ստացած բաժանորդաց ցուցակաց հետ հրատարակութեան հաղորդել անընդհատ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՕՐԱՑՈՅՑ

1870

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Մայր սուրբ Աթոռոյս Տպարանէն մաքուր և ընտիր տպագրութեամբ՝ ի լոյս ընծայեալ վերոյիշեալ Օրացոյցը, որ իւր մէջ կը պարունակէ կարևոր յաւելուածք և տեղեկութիւնք, իւրաքանչիւր ամսոյ վերջը մշակականք, ոտանաւորներ չորս եղանակաց վրայ, և Կայսերական տոհմախմբութեանց օրերը և այլն. կը ծախուի Կոնսիստորիայից և Հ. Կառավարութեանց մօտ.

Գինն է 20 կոպէկ:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ: